ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

20 հունիսի շաբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

79
(3288)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

## ՄԻՀՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՁԱԽՈՂՈՒՄԸ

«Հայոց Համազգային Միասնություն» կուսակցությունը հայտարարություն է տարածել, որ կարեւորելով ազգային միասնությունն ու համատեղ պայքարը հանուն Հայաստանի եւ հայկականության՝ միանում է «Ուժեղ Հայաստան» դաշինքի առաջնորդ Սամվել Կարապետյանի՝ բոլոր ընդդիմադիր ուժերի համախմբման կոչին: Կուսակցության տարածած հայտարարության մեջ, մասնավորապես, նշված է. «Մենք ողջունում եւ աջակցում ենք հետընտրական ընդդիմադիր կոալիցիայի ձեւավորման գործընթացը՝...Ուժը միասնության մեջ է»: Իսկ ո՞վ է այս կուսակցության հիմնադիրը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ կուսակցությունը, որի անունից քաղաքական գործընթացներում հանդես է գալիս Հայաստանի կողմից հետախուզման մեջ գտնվող նախկին պաշտոնյա Միհրան Պողոսյանը, փաստացի հայտնվել է լուրջ խնդիրների առաջ. կուսակցության հիմնադիր կազմից մոտ 100 քաղաքացիներ արդեն հեռացել են կուսակցությունից: «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրների փոխանցմամբ՝ հեռացումների հիմնական պատճառը եղել է այն, որ Միհրան Պողոսյանը քաղաքական գործունեության կազմակերպման, կուսակցական կառուցվածքների ձեւավորման եւ ընթացիկ աշխատանքների համար անհրաժեշտ ծախսերի հետ կապված մի շարք խոստումներ է տվել մարդկանց ու այդպես էլ չի կատարել: Կարճ ասած՝ փողերը չի տվել:

Քաղաքական շրջանակներում երեկվանից քննարկում են, որ «Հայոց Համազգային Միասնություն» կուսակցության հայտարարությունը, հաշվի առնելով կուսակցության ներսում առկա դժգոհություններն ու Միհրան Պողոսյանի ցածր վարկանիշը, ընդդիմադիր շարժմանը միանալու մասին Սամվել Կարապետյանի նախաձեռնության համար կարող է ավելի շատ խնդիրներ ստեղծել, քան քաղաքական օգուտ բերել: Ի վերջո, ընդդիմադիր շարժումների ձախողումների պատճառներից մեկը հաճախ հենց այն է եղել, որ դրանց շուրջ համախմբվել են ոչ թե հանրային վստահություն վայելող ուժեր, այլ քաղաքական կենսագրության եւ հեղինակության հետ կապված ծանր բեռ ունեցող դեմքեր ու խմբեր, ինչի հետեւանքով վնասվել է նաեւ ամբողջ շարժման ընկալումը հանրության շրջանում: Իսկ Նիկոլ Փաշինյանը լավագույնս է օգտագործում նման օդիոզ կերպարների ներգրավումը ընդդիմադիր շարժումների մեջ:

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն, որը խորհրդարանական ընտրությունների ընթացքում ակտիվորեն պայքարում էր ընտրակաշառք բաժանողների դեմ՝ նրանց որոնելով բացառապես ընդդիմադիրների շտաբներում կամ գրասենյակներում, նաեւ հրապարակավ իրազեկեց, որ հունիսի 6-ին եւ 7-ին Հանրապետության ամբողջ տարածքում իրականացնելու են լայնածավալ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ: Կոմիտեն հայտարարում էր, որ օրենսդրությամբ իրեն վերապահված ողջ գործիքակազմի կիրառմամբ եւ ժամանակակից տեխնիկական սարքավորումների, այդ թվում՝ անօդաչու թռչող սարքերի գործադրմամբ իրականացվելու են գործողություններ, որոնք բացառապես միտված են լինելու ընտրակաշառք տալու եւ ստանալու հանցավոր սխեմաների մեջ ներգրավված անձանց բացահայտմանն ու չեզոքացմանը: Սակայն «Ժողովուրդ» օրաթերթը, ուսումնասիրելով Հակակոռուպցիոն կոմիտեի վերջին գնումների ցանկը, հետաքրքիր փաստ է արձանագրել: Պարզվում է՝ կոմիտեն վերջին շրջանում հիմնականում օգտվել է գրասենյակային պարագաների ձեռքբերման, ավտոլվացման, ինչպես նաեւ թարգմանչական ու փորձաքննական ծառայություններից: Մինչդեռ անօդաչու թռչող սարքի ձեռքբերման վերաբերյալ որեւէ գնում կոմիտեի կողմից չի արձանագրվել: Փոխարենը, «Ժողովուրդ» օրաթերթի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ անօդաչու թռչող սարք է ձեռք բերել ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը:



***Շարունակությունը՝ ArmLur.am կայքում***

«Ժողովուրդ» օրաթերթի կառավարական աղբյուրների փոխանցմամբ՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության (ՀԷՑ) շուրջ ընթացող գործընթացը փաստացի կասեցված է եղել, մինչեւ համապատասխան դատական որոշման կայացումը: Մեր աղբյուրների տեղեկացմամբ՝ առաջիկա շաբաթներին՝ կառավարական նիստերից մեկի ընթացքում, նախատեսվում է ընդունել որոշում, որով ՀԷՑ-ը որպես մասնավոր ընկերություն, գործադիրի որոշմամբ կճանաչվի հանրային գերակա շահ: Դրանից հետո արդեն գործադիր իշխանությունը կանցնի հաջորդ փուլին: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ հանրային գերակա շահի ճանաչելուց հետո վարչապետի աշխատակազմը կմշակի գնահատման հատուկ մեխանիզմ, որի իրականացումը, ըստ մեր զրուցակիցների, կարող է տեւել շուրջ 3-4 ամիս: Գործընթացում ներգրավվելու է Հայաստանի ռեզիդենտ, լիցենզավորված գնահատող, բայց իմիջով անկախ ընկերություն, որը պետք է իրականացնի ՀԷՑ-ի շուկայական արժեքի գնահատումը: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ գնահատման արդյունքում ձեւավորված շուկայական արժեքին կավելացվի եւս 15 տոկոս, եւ այդ վերջնական առաջարկը կներկայացվի ՀԷՑ-ի սեփականատիրոջը: Ըստ գործող սցենարի՝ հենց սեփականատերն է վերջնական որոշում կայացնելու՝ վաճառե՞լ ընկերությունը կառավարությանը, թե՞ ոչ: Բայց չվաճառելու դեպքում, միեւնույն է, հանրային գերակա շահի հիմքով Սամվել Կարապետյանի ձեռքից Նիկոլ Փաշինյանի կառավարությունը կվերցնի ՀԷՑ-ը:

***Մանրամասները՝ ArmLur.am կայքում***

ArmLur.am-ը շարունակում է ներկայացնել այն պատգամավորների ունեցվածքը, որոնք չեն ընդգրկվի 2026 թվականի նոր խորհրդարանի կազմում: Այս անգամ անդրադարձը Ազգային Ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Լենա Նազարյանին է: Հատկանշական է, որ նոր խորհրդարանում Նազարյանը չի լինի, իսկ նրա ամուսինը՝ գործող պատգամավոր Նարեկ Բաբայանը, կշարունակի իր քաղաքական գործունեությունը եւ ներկայացված կլինի նոր խորհրդարանում: Լենա Նազարյանը ծնվել է 1983 թվականի մարտի 9-ին Երեւանում: Ավարտել է Երեւանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետը, ինչպես նաեւ Ժուռնալիստիկայի հայկական դպրոցի մեկամյա դասընթացը, հետագայում՝ Ժամանակակից արվեստի ինստիտուտը: Տարիներ շարունակ աշխատել է լրագրության եւ հասարակական ոլորտում՝ «Հետք» շաբաթաթերթում, «Ռեգիոն» հետազոտական կենտրոնում, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնում» եւ Հայաստանի ամերիկյան համալսարանում: 2017 թվականից պատգամավոր է, իսկ 2019-2021 թվականներին զբաղեցրել է Ազգային Ժողովի նախագահի տեղակալի պաշտոնը: Նազարյանի հայտարարագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին հինգ տարիների ընթացքում նրա ունեցվածքում ավելացել է անշարժ գույքի քանակը, զգալիորեն աճել են եկամուտները, միաժամանակ պահպանվել են հիփոթեքային պարտավորությունները:

***Շարունակությունը՝ ArmLur.am կայքում***

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

# «ՄԵՐ ՆՊԱՏԱԿՆ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԿԱՄՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է»

**ArmLur.am-ը զրուցել է «Բարգավաճ Հայաստան» կուսակցության պատգամավորության թեկնածու Գեւորգ Ստեփանյան հետ:**

**- Պարոն Ստեփանյան, խնդրում եմ ներկայացրեք՝ որպես «Մայր Հայաստան» կուսակցության անդամ եւ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության պատգամավորության թեկնածու, ի՞նչ է տեղի ունենում Ձեր եւ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության շուրջ:**

- Հունիսի 7-ի ընտրությունների արդյունքներով երեք ընդդիմադիր ուժ հաղթահարեցին անցողիկ շեմը: Սկզբում հայտարարվեց, որ «Բարգավաճ Հայաստանը» նույնպես անցել է խորհրդարան, սակայն երկու ժամ անց նշվեց, որ կուսակցությունը չի հաղթահարել շեմը՝ 59 ձայնի պակասի պատճառով: Հետագա վերահաշվարկների ընթացքում պարզվեց, որ այդ տարբերությունը ոչ միայն վերականգնվել է, այլ հայտնաբերվել են լրացուցիչ ձայներ եւս: Մեր համոզմամբ՝ տեղի են ունեցել բազմաթիվ խախտումներ, եւ այժմ փորձ է արվում տարբեր եղանակներով կասկածի տակ դնել ընտրությունների արդյունքները:

**- Դուք պնդում եք, որ որոշ տեղամասերի արդյունքները անվավեր են ճանաչվում զինվորների մասնակցության պատճառով: Ինչպե՞ս եք գնահատում այս իրավիճակը:**

- Եթե զինվորների մասնակցությամբ խախտումներ են եղել, ապա դրանց պատասխանատվությունը կրում են պետական կառույցները, քանի որ առանց իշխանության գիտության ու կազմակերպման նման գործընթաց հնարավոր չէր իրականացնել: Բացի այդ, եթե ամբողջ տեղամասի արդյունքներն են անվավեր ճանաչվում, ապա խախտվում են նաեւ այն քաղաքացիների իրավունքները, որոնք օրինական կերպով մասնակցել են քվեարկությանը:

**- Ի՞նչ գնահատական կտաք ընտրությունների ընդհանուր արդյունքներին:**

- Մեր կարծիքով՝ իշխող քաղաքական ուժը չի ստացել այնպիսի աջակցություն, ինչի մասին հայտարարում է: Եթե հաշվենք նաեւ այն ընդդիմադիր ուժերի ստացած ձայները, որոնք չեն հաղթահարել անցողիկ շեմը, ապա կտեսնենք, որ ընդդիմադիր ընտրազանգվածը շատ մեծ է: Սա ցույց է տալիս, որ հասարակության զգալի հատվածը դժգոհ է գործող իշխանություններից:

**- Ի՞նչ սպասելիքներ ունեք վերջնական արդյունքների հրապարակումից:**

- Մենք ակնկալում ենք, որ վերջնական վերահաշվարկները կբացահայտեն եւս բազմաթիվ անհամապատասխանություններ: Արդեն իսկ եղել են դեպքեր, երբ վերահաշվարկից հետո հայտնաբերվել են նախկինում չհաշվառված ձայներ:

**- Վերջին օրերին իրավապահների գործողություններ են իրականացվել Արեգնազ Մանուկյանի բնակարանում: Ինչպե՞ս եք գնահատում այս զարգացումները:**

- Մենք դա դիտարկում ենք որպես քաղաքական ճնշման հերթական դրսեւորում: Մեր համոզմամբ՝ այս գործողությունները չունեն բավարար իրավական հիմքեր եւ ավելի շատ քաղաքական բնույթ են կրում, քան իրավական:

**-Մամուլում տեղեկություններ են շրջանառվում, թե Գագիկ Ծառուկյանին առաջարկվել է քաղաքական գործարք: Ի՞նչ կարող եք ասել այդ մասին:**

- Ինձ հայտնի չէ որեւէ նման առաջարկի մասին: Այնուամենայնիվ, վստահ եմ, որ «Բարգավաճ Հայաստանը» եւ Գագիկ Ծառուկյանը չեն գնա այնպիսի քայլերի, որոնք կհակասեն իրենց քաղաքական սկզբունքներին եւ դիրքորոշմանը:

**- Ի՞նչ եք պատրաստվում անել առաջիկայում: Հնարավո՞ր է փողոցային պայքար:**

- Մենք պատրաստվում ենք օգտագործել օրենքով նախատեսված բոլոր մեխանիզմները՝ ներառյալ դիմելը Սահմանադրական դատարան: Մեր նպատակը ընտրողների կամքի պաշտպանությունն է, եւ այդ պայքարը շարունակվելու է բացառապես իրավական ու քաղաքական հարթություններում:

*Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ*

ՀԱՅՑ՝ ԿԸՀ-Ի ԴԵՄ

**Դավիթ Ղազինյանը Վարչական դատարան հայց է ներկայացրել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի դեմ՝ պահանջելով անվավեր ճանաչել 2026թ. հունիսի 17-ի որոշումները, որոնցով բավարարվել է դատախազության միջնորդությունները եւ ԿԸՀ-ն համաձայնություն է տվել իր նկատմամբ քրեական հետապնդում հարուցել եւ զրկել ազատությունից: Այս մասին հայտնում է «Հետֆ»-ը:**

Վարչական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Լիլիթ Սադոյանի, հայցադիմումն ընդունել է վարույթ: Դատարանը Կենտրոնական ընտրական հանձնաժողովից որպես ապացույց պահանջել է հունիսի 17-ի թիվ 260-Ա եւ թիվ 261-Ա որոշումների կայացման համար հիմք հանդիսացած վարչական վարույթի նյութերը ողջ ծավալով, ինչպես նաեւ ԿԸՀ-ի՝նույն օրվա արտահերթ նիստի ձայնագրությունները: Պահանջված ապացույցները ԿԸՀ-ն Վարչական դատարան պետք է ներկայացնի անհապաղ, այն պահից, երբ ստանա դատարանի որոշման օրինակը: Դատարանը Գլխավոր դատախազությանը ներգրավվել է որպես երրորդ անձ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործով կայացվելիք դատական ակտն անխուսափելիորեն եւ ուղղակիորեն տարածվելու է Գլխավոր դատախազության վրա: Գործով դատական նիստը նշանակվել է 2026թ. հունիսի 22-ին: Նշենք, որ 2026թ. հունիսի 17-ին, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը փակ նիստում քննել եւ բավարարել է «Հայաստան» եւ «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի երեք թեկնածուի՝ Ռոբերտ Քոչարյանի, Դավիթ Ղազինյանի եւ Ռուսլան Բարսեղյանի նկատմամբ քրեական վարույթ հարուցելու վերաբերյալ դատախազության միջնորդությունը: Բացի Ռոբերտ Քոչարյանից, մյուս երկու թեկնածուների մասով դատախազությունը միջնորդություն էր ներկայացրել նաեւ ազատությունից զրկելու համաձայնություն տալու վերաբերյալ, որը նույնպես բավարարվել է: Դատարանը Դավիթ Ղազինյանին 2 ամսով կալանավորելու որոշում է կայացրել:Դավիթ Ղազինյանին առաջադրված մեղադրանքն առնչվում է Հակակոռուպցիոն կոմիտեի հրապարակած ձայնագրությանը, որտեղ խոսվում է Դավիթ Ղազինյանի կողմից 1,4 մլն դրամ ենթադրյալ ընտրակաշառք տալու մասին: «Չկա այդպիսի գումար, ես չգիտեմ՝ ով ում է տվել, ինչ է արել, չկա այդպիսի գումար»,-լրագրողների հետ զրույցում հայտարարել է Դավիթ Ղազինյանը:

## ԿԱԼԱՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Երեկ վաղ առավոտից Հայաստանի իրավապահ եւ դատական համակարգերում զարգացումները մեկը մյուսին են հաջորդում՝ նոր հարցեր առաջացնելով քաղաքական դաշտում ընթացող գործընթացների վերաբերյալ: Դատարանի որոշմամբ «Հայաստան» դաշինքի պատգամավորի թեկնածու Ռուսլան Բարսեղյանը կալանավորվել է երկու ամսով, իսկ նույն դաշինքի ներկայացուցիչ Ասատուր Քոչարյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է տնային կալանքը: Հիշեցնենք, որ հունիսի 17-ին Կենտրոնական ընտրական հանձնաժողովը բավարարել էր դատախազության միջնորդությունները՝ երկու թեկնածուների նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու եւ նրանց անձեռնմխելիության սահմանափակման համաձայնություն տալու վերաբերյալ: Սակայն օրվա ամենաաղմկահարույց զարգացումը դարձավ Ազգային ժողովի նախկին պատգամավոր Ռուբեն Հակոբյանի ձերբակալության մասին տեղեկությունը: Հակոբյանը մինչ իրավապահների գործողությունը հասցրել է գրառում կատարել սոցիալական ցանցում՝ իշխանություններին ուղղված կոշտ եւ ծանր մեղադրանքներով: Այս ամենը տեղի է ունենում ներքաղաքական լարվածության պայմաններում, երբ ընդդիմադիր շրջանակները հերթական ձերբակալություններն ու քրեական գործերը գնահատում են որպես քաղաքական ճնշման գործիք, մինչդեռ իշխանությունները պնդում են, որ իրավապահ համակարգը գործում է բացառապես օրենքի շրջանակներում: Փաստը մնում է փաստ. մեկ օրում ընդդիմադիր դաշտի մի քանի հայտնի ներկայացուցիչների նկատմամբ կիրառված խափանման միջոցներն ու ձերբակալությունները նոր թափ են հաղորդել քաղաքական հակասություններին: Հասարակության մի հատվածի համար սա օրենքի գերակայության դրսեւորում է, մյուսների համար՝ իշխանության եւ ընդդիմության միջեւ պայքարի հերթական սրացում:

*Ս. Գ.*

## ԴԻՄՈՒՄԸ ՄՈՒՏՔԱԳՐՎԵԼ Է ՍԴ

2026 թվականի հունիսի 19-ին «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի ներկայացուցիչը դիմում է ներկայացրել Սահմանադրական դատարան, որով վիճարկվում է Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրությունների արդյունքներով ԿԸՀ-ի կողմից ընդունված որոշումը: Սահմանադրական դատարանը դիմումը մուտքագրվելուց հետո երկօրյա ժամկետում աշխատակարգային նիստում որոշում է դիմումի ընդունելիության հարցը: Դիմումը վարույթ ընդունվելու դեպքում նշանակվում է զեկուցող դատավոր, որը գործը նախապատրաստում է դատաքննության: Ազգային ժողովի ընտրությունների արդյունքների վերաբերյալ վեճերով դատաքննությունն իրականացվում է բանավոր ընթացակարգով: Սահմանադրական դատարանը պարտավոր է գործը քննել եւ որոշում ընդունել դիմումի մուտքագրման օրվանից ոչ ուշ, քան 15 օր հետո: Սույն դիմումի կարգավիճակի վերաբերյալ ընթացիկ տեղեկատվությանը կարող եք հետեւել ՍԴ պաշտոնական կայքում եւ Ֆեյսբուք սոցիալական հարթակի ՍԴ պաշտոնական էջում:

# ԻՐԱՎԻՃԱԿ

## ԿՇԱՐՈՒՆԱԿԵՆՔ ԱՇԽԱՏԵԼ

«Մենք ոչ մի դեպքում չենք կարող ՀՀ վերջին ընտրությունները համարել ժողովրդավարական»: Նման հայտարարություն է արել ՌԴ Պետդումայի ԱՊՀ գործերով կոմիտեի նախագահի առաջին տեղակալ, ԱՊՀ երկրների ռուսական ինստիտուտի տնօրեն Կոնստանտին Ջատուլինը՝ խոսելով ՀՀ խորհրդարանական ընտրություններից. «Բայց քանի որ մենք դաշինքների մեջ ենք Հայաստանի հետ եւ ավանդաբար զարգացրել ենք կապեր, մենք կշարունակենք աշխատել Հայաստանի հետ՝ հիմնվելով այն փաստի վրա, որ ներկայումս երկիրը ղեկավարում են մարդիկ, ովքեր իշխանության են մնացել անարդար, ոչ ժողովրդավարական ընտրությունների արդյունքում»,-ասել է նա: Նրա խոսքով՝ Հայաստանը կշարունակի Ռուսաստանից հեռանալու եւ Արեւմուտքի հետ մերձեցման քաղաքականությունը: «Մոսկվան պետք է սկզբունքային դիրքորոշում որդեգրի: Իմ կարծիքով՝ այդ սկզբունքայնությունը պետք է արտահայտվի նրանով, որ մենք որեւէ դեպքում չենք կարող անցկացված ընտրությունները համարել ժողովրդավարական եւ ընդունված չափանիշներին համապատասխան: Չենք կարող, որովհետեւ հավասար ընտրապայքարի պայմաններ չեն ապահովվել: Ընդհակառակը, կիրառվել են ճնշումներ, որոնք շարունակվում եւ խորանում են նաեւ ընտրություններից հետո՝ ընդդիմադիր ուժերի եւ նրանց առաջնորդների նկատմամբ»,-ասել է Ջատուլինը:

## 80 ՄԻԼԻԱՐԴ ԴՈԼԱՐ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ

ԱՄՆ ռազմական գերատեսչությունը Կոնգրեսի անդամներին տեղեկացրել է, որ Իրանի դեմ ռազմական գործողության եւ այլ ծախսերի կապակցությամբ իրեն անհրաժեշտ է 80 միլիարդ դոլարի լրացուցիչ ֆինանսավորում: Այս մասին հայտնել է The Wall Street Journal (WSJ) թերթը՝ հղում անելով աղբյուրներին, հաղորդում է ՏԱՍՍ-ը: Նրանց տվյալներով՝ այս շաբաթվա սկզբին ԱՄՆ ռազմական նախարարի առաջին տեղակալ Սթիվեն Ֆայնբերգը հեռախոսազրույցներ է ունեցել ամերիկացի օրենսդիրների հետ եւ տեղեկացրել նրանց Պենտագոնի կարիքների մասին: Ինչպես նշվում է, ռազմական գերատեսչության ղեկավարությունը նախազգուշացրել է, որ Պենտագոնի միջոցները կարող են սպառվել այս ամառ, եթե Կոնգրեսը չհաստատի լրացուցիչ ֆինանսավորումը: Ամերիկացի զինվորականները կարող են ստիպված լինել կրճատել մի շարք ծրագրեր, այդ թվում՝ զորավարժությունները, գրում է հրատարակությունը: Ավելի վաղ Վաշինգտոնի Ռազմական մեկնաբանների խմբի (Defense Writers Group) հետ առցանց հանդիպման ժամանակ, ԱՄՆ Սենատի զինված ուժերի հարցերով կոմիտեի ավագ դեմոկրատ Ջեք Ռիդը (-Ռոդ Այլենդ նահանգից) հայտնել էր, որ Կոնգրեսում կարծում են, թե ԱՄՆ վարչակազմը 2026 թվականին Իրանում իրականացվող գործողության կապակցությամբ ռազմական կարիքների համար կպահանջի 100-200 միլիարդ դոլարի լրացուցիչ ֆինանսավորում:

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ

## ՌԴ-Ն ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ Է, ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

**Ռուսաստանի Դաշնության վերահսկողական դաշնային մարմինների կողմից հայկական գյուղմթերքի նկատմամբ սահմանափակումների հերթական ալիքը վերջին շաբաթներին լուրջ ցնցում է առաջացրել Հայաստանի արտահանման ոլորտում: Մի քանի շաբաթվա ընթացքում ռուսական կառույցները սահմանափակել են Հայաստանից ներմուծվող մեծ խումբ գյուղատնտեսական նշանակության ապրանքների մուտքը՝ հերթական անգամ ցույց տալով, թե որքան խոցելի է մնում հայկական արտահանումը մեկ շուկայից կախվածության պայմաններում:**

Մայիսի 30-ից Ռուսաստանը սահմանափակեց Հայաստանից թարմ լոլիկի, վարունգի, պղպեղի, կանաչեղենի եւ ելակի ներմուծումը: Ընդամենը մի քանի օր անց՝ հունիսի 2-ից, սահմանափակումներ կիրառվեցին նաեւ կենդանի ձկան եւ ձկնամթերքի արտահանման նկատմամբ: Դրանից առաջ՝ մայիսի 22-ին, «Ռոսսելխոզնադզորը» արգելել էր հայկական ծաղիկների ներմուծումը: Սրան զուգահեռ, «Ռոսպոտրեբնադզորը» կասեցրեց նաեւ հայկական հայտնի «-Ջերմուկ» հանքային ջրի ներմուծումն ու արգելել է դրա վաճառքը ՌԴ-ում՝ պատճառաբանելով մակնշման եւ տեխնիկական պահանջների հետ կապված անհամապատասխանություններ: Արդյունքում՝ հայկական մի շարք արտադրողներ եւ արտահանողներ փաստացի հայտնվեցին նոր տնտեսական ճնշման ներքո:

Ստեղծված իրավիճակում Հայաստանի կառավարությունը գործարկել է արտահանման աջակցության նոր ծրագրեր՝ փորձելով մեղմել տնտեսվարողների կրած վնասները եւ կանխել արտահանման ծավալների կտրուկ անկումը, ինչպես նաեւ խթանել արտահանումը այլ շուկաներ:

ՀՀ կառավարության 2026 թվականի հունիսի 11-ի N 839-L որոշմամբ հաստատվել է թարմ պտղի, շշալցված խաղողի գինու, բրենդիի եւ հանքային ջրի արտահանման աջակցության միջոցառումը: Ծրագրի նպատակն է ֆինանսական խթանների միջոցով բարձրացնել հայկական արտադրանքի մրցունակությունը արտաքին շուկաներում:

Որոշման համաձայն՝

ծիրանի յուրաքանչյուր կիլոգրամի համար նախատեսվում է 200 դրամ փոխհատուցում,

սալորի, դեղձի եւ նեկտարինի համար՝ 250 դրամ,

կեռասի համար՝ 400 դրամ,

շշալցված խաղողի գինու մեկ լիտրի համար՝ 350 դրամ,

բրենդիի մեկ բացարձակ լիտրի համար՝ 830 դրամ,

հանքային ջրի մեկ լիտրի համար՝ 150 դրամ:

Փոխհատուցում ստանալու համար տնտեսվարողները պետք է էկոնոմիկայի նախարարություն ներկայացնեն համապատասխան մաքսային եւ հաշվարկային փաստաթղթերը, որոնց ստուգումից հետո գումարները փոխանցվելու են շահառուների հաշվեհամարներին:

Սակայն սա կառավարության միակ հակաճգնաժամային քայլը չէ: Ավելի վաղ՝ հունիսի 4-ին ընդունված N 800-L որոշմամբ, հաստատվել էր նաեւ ջերմատնային արտադրության թարմ պտուղբանջարեղենի եւ ծաղիկների արտահանման աջակցության ծրագիրը: Այդ ծրագրով նախատեսված փոխհատուցումները եւս բավականին զգալի են.

ելակի համար՝ 770 դրամ մեկ կիլոգրամի դիմաց,

լոլիկի համար՝ 275 դրամ,

պղպեղի համար՝ 400 դրամ,

ծաղիկների համար՝ 37 դրամ մեկ հատի դիմաց:

Կառավարությունում, ըստ մեր տեղեկությունների, արդեն բացահայտ խոսում են արտադրանքի որակի ստանդարտը ապահովելու եւ արտահանման ուղղությունների դիվերսիֆիկացման սուր անհրաժեշտության մասին:

Ռուսական շուկայից չափազանց մեծ կախվածությունը հերթական անգամ վերածվել է համակարգային տնտեսական ռիսկի, եւ այժմ իշխանությունները փորձում են արագացնել նոր շուկաներում տեղ զբաղեցնելու գործընթացը:

Մեր տեղեկություններով՝ տնտեսվարողներին առաջարկվում է ակտիվացնել արտահանումը դեպի ԱՄԷ, Իրան, Ուզբեկստան, Նիդերլանդներ, ԵՄ այլ երկրներ եւ Ուկրաինա, որտեղ հայկական գյուղմթերքի եւ վերամշակված արտադրանքի նկատմամբ պահանջարկը պահպանվում է կամ աճի միտում ունի:

Ավելին, ըստ մեր տեղեկությունների, քննարկվում են նաեւ պետական աջակցության լրացուցիչ մեխանիզմներ, որոնց շրջանակում հնարավոր է փոխհատուցվեն արտահանման հետ կապված լոգիստիկ ծախսերը, որպեսզի նոր շուկաներ մուտք գործելու գործընթացը տնտեսավարողների համար դառնա ավելի մրցունակ եւ ֆինանսապես հասանելի:

Այսպիսով, ռուսական սահմանափակումների նոր ալիքը հերթական անգամ բացահայտեց Հայաստանի արտահանման համակարգի խոցելի կողմերը: Մինչ Մոսկվան շարունակում է սահմանափակել հայկական արտադրանքի մուտքը սեփական շուկա, Երեւանը փորձում է միաժամանակ երկու ճակատով պայքարել՝ ներսում փոխհատուցել արտադրողների կորուստները, իսկ դրսում՝ շտապ գտնել նոր շուկաներ: Հարցը, սակայն, մնում է բաց. արդյո՞ք նոր շուկաները կհաջողեն արագ փոխարինել այն ծավալներին, որոնք տարիներ շարունակ ապահովում էր ռուսական ուղղությունը:

*ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

## ՀԱՅՏՆԵԼ Է

Իսրայելական բանակը հայտնել է իր մեկ զինվորի մահվան եւ յոթի վիրավորման մասին Լիբանանի հարավում: Խումբը տուժել է Իրանի կողմից աջակցություն ստացող «Հըզբոլլահ» խմբավորման տեղադրած ականի պայթյունից: Այդ մասին տեղեկացնում է «Արմենպրես»-ը՝ վկայակոչելով Euronews-ը: Միջադեպը տեղի է ունեցել մոտավորապես այն ժամանակ, երբ Իրանի եւ Միացյալ Նահանգների նախագահները հեռակա կարգով ստորագրել են խաղաղության վերաբերյալ փոխըմբռնման շրջանակային հուշագիրը: Իսրայելը նախկինում զգուշացրել էր, որ ինքը համաձայնագրի կողմ չէ եւ կշարունակի լուծել ազգային անվտանգության հարցերը, այդ թվում՝ հարավային Լիբանանում: Չնայած հրադադարին՝ այնտեղ շարունակվում են հրետակոծությունները: Մի քանի օր առաջ ԱՄՆ-ի նախագահ Թրամփը քննադատեց Իսրայելին՝ «Հըզբոլլահի» հետ հակամարտության պատճառով հարավային Լիբանանում «չափազանց երկար» մնալու համար: Վերջերս հրապարակված ԱՄՆ-Իրան շրջանակային հուշագրում ներառված է Լիբանանի տարածքում ռազմական գործողությունների դադարեցման մասին կետ: Իսրայելական լրատվամիջոցները հաղորդել են, որ Իսրայելի ռազմական ղեկավարությունը անընդունելի է համարում լիբանանյան եւ իրանական ուղղությունների համատեղումը մեկ համաձայնագրի շրջանակում: Միեւնույն ժամանակ, ՄԱԿ-ը զգուշացնում է Լիբանանում մարդասիրական ճգնաժամի սրման մասին, որտեղ, կազմակերպության տվյալներով, հակամարտությունն արդեն տեղահանել է ավելի քան մեկ միլիոն մարդու եւ սպանել գրեթե 4000-ի:

## ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ Է ԳՆԱՀԱՏԵԼ

Ռուսաստանին եւ Հարավարեւելյան Ասիայի պետությունների ասոցիացիային (ԱՍԵԱՆ) հաջողվեց արդյունավետ աշխատել գագաթնաժողովում, հանդիպումն անցավ բարեկամական եւ գործնական մթնոլորտում: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ այս մասին ասել է Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը Կազանի գագաթնաժողովի արդյունքներին նվիրված հայտարարության մեջ: «Մեզ իրոք հաջողվեց լավ եւ արդյունավետ աշխատել: Մեր հանդիպումն անցավ բարեկամական եւ գործնական մթնոլորտում, դրան մասնակցեցին ԱՍԵԱՆ-ի բոլոր 11 երկրների առաջնորդներ, կառավարությունների ղեկավարներ, առաջատար քաղաքական գործիչներ եւ պետական պաշտոնյաներ, ինչպես նաեւ ասոցիացիայի գլխավոր քարտուղարը»,-Պուտինի խոսքերն է մեջբերում ՏԱՍՍ-ը: Ըստ Կրեմլի մամուլի ծառայության՝ Կազանում Ռուսաստան-ԱՍԵԱՆ գագաթնաժողովից հետո ընդունվել է փաստաթղթերի փաթեթ՝ Կազանի հռչակագիրը, Ռուսաստան-ԱՍԵԱՆ գործողությունների համապարփակ ծրագիրը, Մշակութային համագործակցության վերաբերյալ համատեղ հայտարարությունը եւ էներգետիկ համագործակցության վերաբերյալ համատեղ հայտարարությունը: ԱՍԵԱՆ-ը ներառում է Հարավարեւելյան Ասիայում գտնվող 11 երկիր՝ Բրունեյը, Արեւելյան Թիմորը, Վիետնամը, Ինդոնեզիան, Կամբոջան, Լաոսը, Մալայզիան, Մյանման, Սինգապուրը, Թաիլանդը եւ Ֆիլիպինները: Ռուսաստանը կազմակերպության հետ երկխոսության լիիրավ գործընկեր է 1996 թ. հուլիսից:

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

# ԲԱՆՏԵՐՈՒՄ ԿԱԼԱՆԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵՂ ՉԿԱ

**Հունիսի 8-ին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը հայտնել էր, որ ՀՀ դատախազությունում ստացված եւ մշակված տվյալներով՝ 2026 թվականի փետրվարի 7-ից՝ Ազգային Ժողովի հերթական ընտրությունների գործընթացի մեկնարկից մինչեւ հունիսի 7-ը՝ ժամը 24:00-ն, նախաքննություն իրականացնող մարմիններում ընդհանուր ստացվել է ընտրական գործընթացին խոչընդոտող առերեւույթ հանցանքների վերաբերյալ 599 հաղորդում:**

599 հաղորդումներից՝

● 210-ով նախաձեռնվել է քրեական վարույթ:

● 349 անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում:

● 14 քրեական վարույթ՝ 42 անձի վերաբերյալ, հաստատված մեղադրական եզրակացությամբ, հանձնվել է իրավասու դատարան:

● Պատգամավորի 13 թեկնածուների վերաբերյալ Կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացվել քրեական հետապնդում հարուցելու եւ ազատությունից զրկելու համաձայնություն ստանալու վերաբերյալ միջնորդություններ, որոնցից 12-ի վերաբերյալ միջնորդությունները բավարարվել են, 1 անձի վերաբերյալ միջնորդությունը կքննարկվի առաջիկայում: Ձերբակալվել է պատգամավորի թեկնածու Վ.Ե.-ն: Այս իրավիճակի զուգահեռ դատական համակարգն էր պաշտոնական հաղորդագրություն տարածել, որ Հակակոռուպցիոն դատարանը վերջին երկու ամսում Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից ստացել է խուզարկության մոտ 400 միջնորդություն, ինչպես նաեւ՝ խափանման միջոց կիրառելու վերաբերյալ 160-ից ավել միջնորդություն: Խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունների մոտ 10%-ն է մերժվել: Միջնորդությունները վերաբերել են ենթադրյալ կաշառք տալ-ստանալուն, ընտրության ժամանակ բարեգործության արգելքը խախտելուն:

Այս պահին դատարանում առկա են միջնորդություններ, որոնք դեռ քննարկման փուլում են: Եվ ահա համատարած կալանավորումները խնդիր են ստեղծել բանտերում: ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն բանտապետերը կալանավորների ընդունելու խնդիր ունեն: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ ամեն խցում կարող է լինել 8 անձ, իսկ նախկինում եղել է, որ թվով շատ կալանավորներն են եղել մեկ խցում:

Արդյունքում, սահմանված թիվը չեն կարող գերազանցել եւ նոր կալանավորներին չեն կարողանում տեղավորել, քանի որ խուց չունեն: Դիմեցինք քրեակատարողական ծառայության լրատվական բաժին, որտեղից ի պատասխան հայտնեցին, որ դիմենք գրավոր:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

## ՎՐԱԵՐԹ

Հունիսի 14-ի երեկոյան ժամը 7-ին «Էրեբունի» բժշկական կենտրոնից ՆԳՆ օպերատիվ կառավարման կենտրոն ստացվել է հաղորդում, որ մարմնական վնասվածքներով բուժօգնության է դիմել Արարատի մարզի Հովտաշեն գյուղի բնակիչ 30-ամյա մի երիտասարդ: Նա հայտնել էր, թե վնասվածքը ստացել է հեծանիվից ընկնելու հետեւանքով: Արտաշատի համայնքային ոստիկանները, համագործակցելով Քրեական ոստիկանության Արարատի մարզային վարչության ծառայողների հետ, պարզեցին, որ Հովտաշենում գտնվող գյուղմթերքի շուկայի տարածքում տուժած երիտասարդն ու նրա համագյուղացիները վիճաբանել են միմյանց հետ, փոխադարձ հարվածներ հասցրել, եւ այդ ընթացքում 34-ամյա համագյուղացին, նստելով «Նիսան» մակնիշի իր ավտոմեքենան, վարել ու վրաերթի է ենթարկել 30-ամյա տուժածին եւ դիմել փախուստի: Բացատրական աշխատանքի շնորհիվ հունիսի 16-ին 34-ամյա հովտաշենցին ներկայացել է Քրեական ոստիկանության Արարատի մարզային վարչություն եւ ձերբակալվել: Ձեռնարկված հետագա միջոցառումների արդյունքում միջադեպին մասնակից 8 անձ հայտնաբերվել եւ ներկայացվել է նախաքննական մարմին, նրանցից 4-ը ձերբակալվել եւ տեղափոխվել է ձերբակալվածների պահման վայր: Հանգամանքները պարզվում են:

## ՊԵՏԱԿԱՆ ՈՒՆԵՑՎԱԾՔԻ ԳՈՂՈՒԹՅՈՒՆ

Հունիսի 16-ին Համայնքային ոստիկանության Գուգարքի բաժին Դարպաս բնակավայրի վարչական ղեկավարից հաղորդում է ստացվել, որ ապամոնտաժման միջոցով գողացել են բնակավայրի ոռոգման ջրի համար նախատեսված պանելները՝ պատճառելով 240 հազար դրամի վնաս: Համայնքային ոստիկանների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ գողությունը կատարել է Լեռնապատ գյուղի բնակիչ 40-ամյա տղամարդը: Նա ձերբակալվել եւ տեղափոխվել է բաժին, որտեղ բացատրական աշխատանքի արդյունքում հայտնել է, որ գողոնը իր տրակտորով տեղափոխել է Լեռնապատ գյուղի վարչական տարածք՝ շինարարության մեջ օգտագործելու նպատակով: Կազմված փաստաթղթերը ներկայացվել են Լոռու մարզային քննչական վարչություն: Հունիսի 17-ին պետական ունեցվածքի գողության վերաբերյալ օպերատիվ տեղեկություն էր ստացվել նաեւ Համայնքային ոստիկանությանՏավուշի բաժնում: Ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում համայնքային ոստիկանները պարզել են, որ Մովսես գյուղի 74-ամյա երկու բնակիչ հողաշերտի տակից քանդելու միջոցով ապամոնտաժել եւ գողացել են այգիների ոռոգման համար նախատեսված ջրագծից 15 մետր մետաղյա խողովակաշար, ապա «ՈւԱԶ»-ով տեղափախել իրենցից մեկի առանձնատան տարածք: Գողոնը հայտնաբերվել է: Կազմված փաստաթղթերն ուղարկվել են Բերդի քննչական բաժին:

ԼՈՒՐԵՐ

## ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ Է

«Ուժեղ Հայաստան»-ի պատգամավորի թեկնածու Աշոտ Եղիազարյանը կալանավորվել է 100-ից ավելի ընտրողի ընտրակաշառք տալու համար: Ինչպես արդեն հայտնել ենք, ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչությունում նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում կատարված քննչական գործողությունների արդյունքում բացահայտվել են 100-ից ավելի ընտրակաշառք տալու եւ ստանալու դեպքեր: Մասնավորապես, առերեւույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ «Ուժեղ Հայաստան»-ի պատգամավորի թեկնածու Ա.Ե.-ն մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ, 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք ՀՀ ԱԺ հերթական ընտրություններին «Ուժեղ Հայաստան» դաշինքի օգտին քվեարկելու պայմանով՝ Արտաշատ համայնքի 100-ից ավելի ընտրողի 100.000-500.000 ՀՀ դրամի չափով ընտրակաշառք է տվել, իսկ նշված ընտրողները որոշ դեպքերում գործելով այլ ընտրողների հետ խմբի կազմում, նախնական համաձայնությամբ ստացել են տարբեր դրամական միջոցների չափով ընտրակաշառքներ: Քրեական վարույթի նախաքննության ընթացքում պատգամավորի թեկնածու Ա.Ե.-ի կատմամբ հսկող դատախազի որոշմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ մասով (ընտրակաշառք տալը) եւ 296-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (առանձնապես խոշոր չափերով փողերի լվացումը): Նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը: Նախաքննությունը շարունակվում է:

## ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԼ ԵՆ

Սա պարզապես ուսումնավարժանք չէ, այլ պատրաստվածության իրական փորձություն՝ ջրային միջավայրում հնարավոր արտակարգ իրավիճակներին ճիշտ արձագանքելու համար: Առաջին անգամ Սեւանա լճում անցկացվել է «Հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումը եւ իրականացումը զբոսանավում առաջացած հրդեհի դեպքում» թեմայով տակտիկական ուսումնավարժանք: Ուսումնավարժությանը հետեւում էին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, ՆԳՆ Փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ Գարեգին Հակոբյանը, Պարեկային ծառայության Գեղարքունիքի մարզի գումարտակի հրամանատար Աղաս Խաչատրյանը: Ըստ սցենարի՝ Սեւանա լճում գտնվող զբոսանավում հրդեհ է բռնկվել, նավի անձնակազմի երկու անդամ ստացել են տարբեր աստիճանի այրվածքներ, քաղաքացիներից մի քանիսը խուճապահար նետվել են լիճը, իսկ մեկ քաղաքացի ջրահեղձ է եղել: «Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության նպատակը արձագանքող ուժերի մարտունակությունը բարձրացնելն է»,- նշում է Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ Գարեգին Հակոբյանը:

Ստեղծված իրավիճակը պահանջում էր միաժամանակ իրականացնել հրդեհաշիջման, որոնողափրկարարական, ջրափրկարարական եւ բժշկական օգնության համալիր գործողություններ: Ուսումնավարժանքին ներգրավված էին Փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության ստորաբաժանումները, ջրափրկարարական ջոկատը, ՆԳՆ ոստիկանության ջրային պարեկային ծառայության կարգախմբերը, ինչպես նաեւ Գավառի եւ Սեւանի բժշկական կենտրոնների աղետների բժշկության մեկական թիմեր: «Ուսումնական վարժանքի ընթացքում, համագործակցելով մեր գործընկերների հետ, ջրային պարեկային ծառայողները իրականացրել են տարածքի սահմանազատում եւ պայմանական տուժածների դուրսբերում»,- նշում է ՊԾ Գեղարքունիքի մարզի գումարտակի ջրային պարեկների վաշտի 2-րդ դասակի հրամանատար Իշխան Հակոբյանը: Գործնական միջոցառման ընթացքում ստուգվել են ուժերի եւ միջոցների օպերատիվ տեղակայման, ջրից քաղաքացիների դուրս բերման, բժշկական օգնության կազմակերպման եւ տարբեր ծառայությունների համակարգված փոխգործակցության մեխանիզմները: Ավարտին ամփոփվել են արդյունքները, մատնանշվել առավել բարելավման կարիք ունեցող ուղղությունները:

Ուսումնավարժանքը հնարավորություն է տվել իրականությանը մոտարկված պայմաններում գնահատել արձագանքող ստորաբաժանումների պատրաստվածության մակարդակը եւ բարձրացնել արտակարգ իրավիճակների արդյունավետ կառավարման կարողությունները:

● *Հանրապետությունում հունիսի 17-ից 18-ը հայտնաբերվել է 8 հետախուզվող, կամավոր ներկայացել է 3-ը:*

# ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՄԱՐԶ

### «ՀԻՄՆԱՏԱՎՈՒՇ»-ԻՆ ԴԱՏԻ ԵՆ ՏՎԵԼ

«ՀիմնաՏավուշ» զարգացման հիմնադրամը ստեղծվել է Ֆրանսիայի հայկական հիմնադրամի կողմից: 2010թ. մայիսի 22-ին Իջեւանում Ֆրանսիայի Օ-Դը-Սենի գլխավոր խորհրդի նախագահ Պատրիկ Դեւեջյանը եւ Տավուշի մարզպետ Արմեն Ղուլարյանը ստորագրել են համատեղ նկատառումների հուշագիր: 2011թ. մարտին Ֆրանսիայում կողմերը ստորագրել են Օ-Դը-Սենի գլխավոր խորհրդի եւ Տավուշի մարզի միջեւ ապակենտրոնացված համագործակցության շրջանակային պայմանագիր, հետագայում համագործակցության նոր համաձայնագրեր են կնքվել: «ՀիմնաՏավուշ» հիմնադրամը տարիներ առաջ Տավուշի մարզում ստեղծել է 8 գյուղատնտեսական արտադրական կոոպերատիվներ, որոնցից 3-ը Իջեւան համայնքում՝ Գանձաքար, Կիրանց, Սարիգյուղ բնակավայրերում, 2-ը Նոյեմբերյանում՝ Բարեկամավան եւ Կողբ գյուղերում, 2-ը Բերդ համայնքում՝ Նավուրում եւ Պառավաքարում, 1-ը Դիլիջան համայնքի Գոշ գյուղում: Այդ կոոպերատիվների անդամների խոսքերով՝ պայմանագրով նախատեսված է, որ դրանց հիմնումից 7 տարի անց նշված կոոպերատիվների գույքը պետք է դառնար կոոպերատիվների անդամների սեփականությունը: Պայմանագրով նախատեսված 7 տարին վաղուց է անցել, սակայն «ՀիմնաՏավուշը» դրանց գույքի հանձնում չի արել: Նոյեմբերյանի Կողբ գյուղի անասնաբուծական, Իջեւանի Գանձաքար գյուղի «Գմբեթ» անասնաբուծական եւ Սարիգյուղի մեխանիզատորական արտադրական կոոպերատիվները «ՀիմնաՏավուշ» հիմնադրամի դեմ քաղաքացիական հայց են ներկայացրել՝ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3, 121 եւ 122 հոդվածների պահանջներով՝ դատարանին խնդրել են՝ պարտավորեցնել «ՀիմնաՏավուշ» զարգացման հիմնադրամին կատարել 3 արտադրական կոոպերատիվների հանդեպ ստանձնած պարտավորությունները: Երեւան քաղաքի քաղաքացիական դատարանը հայցադիմումը վերադարձրել է: Այդ կոոպերատիվների ներկայացուցիչներից տեղեկացա, որ հիշյալ արտադրական կոոպերատիվների անդամներն իրենց հայցադիմումի թերությունները շտկելով՝ կրկին հայց են ներկայացնելու «ՀիմնաՏավուշ» հիմնադրամի դեմ:

### ՈՐՈՆՎՈՒՄ ԵՆ ԿԱԴՐԵՐ

Տավուշի մարզպետ Հ. Ղալումյանին հարցում եմ արել մարզպետի աշխատակազմի հաստիքների թվի, թափուր հաստիքների ու դրանք լրացնելու նպատակով տրվող հայտարարությունների վերաբերյալ: Մարզպետի աշխատակազմից հայտնել են. «ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմում առկա է 76 հաստիք, որից 10 հաստիք թափուր է: Թափուր հաստիքները համալրելու համար պարբերաբար տրվում են հայտարարություններ՝ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակով»:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*

## ԱՄՆ-ԻՐԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

# Ո՞Վ ԹԵԼԱԴՐԵՑ ՕՐԱԿԱՐԳԸ

**ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի եւ Իրանի միջեւ ձեռք բերված նախնական համաձայնագիրը չի ապահովում այն հիմնական նպատակների իրականացումը, որոնք Վաշինգտոնը հայտարարել էր պատերազմի սկզբում:**

Փետրվարի 28-ին պատերազմի մեկնարկին Թրամփը հայտարարել էր, որ ԱՄՆ-ն «կոչնչացնի Իրանի հրթիռները եւ հրթիռային արդյունաբերությունը»: Սակայն այժմ նախագահը խոսում է բոլորովին այլ տոնով՝նշելով, որ Իրանը կարող է որոշ քանակությամբ հրթիռներ ունենալ, քանի որ նման զինատեսակներ ունեն նաեւ այլ երկրներ: Թրամփը պատերազմի ընթացքում մի շարք հավակնոտ նպատակներ էր առաջ քաշել, սակայն Իրանի հետ ձեռք բերված 14 կետանոց հուշագիրը ցույց է տալիս, որ դրանց մեծ մասը կամ մեղմացվել է, կամ ամբողջությամբ դուրս է մնացել օրակարգից: Մասնավորապես, եթե սկզբում ԱՄՆ նախագահը խոսում էր Իրանի հրթիռային ծրագրի լիակատար ոչնչացման մասին, ապա համաձայնագրում հրթիռների վերաբերյալ որեւէ դրույթ ներառված չէ: Նմանապես, Թրամփի նախկին պահանջը՝Իրանի «անվերապահ կապիտուլյացիան», նույնպես չի իրականացվել. փոխարենը կողմերը բանակցությունների միջոցով եկել են փոխզիջումների:

Չի իրականացել նաեւ Իրանում իշխանափոխության նպատակը: Պատերազմի սկզբում Թրամփը իրանցիներին կոչ էր անում փոխել իշխանությունը, սակայն հետագայում այդ թեման աստիճանաբար անհետացավ նրա հայտարարություններից: Այժմ նա պնդում է, որ պատերազմը չի սկսել իշխանափոխության նպատակով:

Իրանի միջուկային ծրագրի հարցում եւս վերջնական արդյունք դեռ չկա: Հուշագրով Թեհրանը վերահաստատում է, որ միջուկային զենք չի մշակի, սակայն կոնկրետ մեխանիզմներ չեն ներկայացվել, որոնք կբացառեն նման հնարավորությունը ապագայում:

Թրամփը նախկինում նաեւ պահանջում էր Իրանում ուրանի հարստացման լիակատար դադարեցում, սակայն այժմ ընդունում է, որ Թեհրանին կարող է թույլատրվել ցածր մակարդակի հարստացում՝ խաղաղ նպատակներով, օրինակ՝ էլեկտրաէներգիայի արտադրության համար: Բացի այդ, ԱՄՆ նախագահը նախկինում հայտարարել էր, որ Միացյալ Նահանգները կվերցնի Իրանի բարձր հարստացված ուրանի պաշարները, սակայն համաձայնագրով նախատեսվում է դրանց նոսրացում՝ Միջուկային էներգիայի միջազգային գործակալության վերահսկողությամբ, ոչ թե առգրավում: Հուշագրում բացակայում են նաեւ Իրանի կողմից «Հեզբոլլահի», «Համասի» եւ այլ տարածաշրջանային խմբավորումների ֆինանսավորման ու սպառազինման դադարեցման վերաբերյալ հստակ դրույթներ: Միաժամանակ փաստաթուղթը նախատեսում է Իրանի նավթի վաճառքի սահմանափակումների մեղմացում, ինչը, ըստ քննադատների, կարող է լրացուցիչ ֆինանսական միջոցներ ապահովել Թեհրանի համար:

Մեկ այլ վիճահարույց հարց վերաբերում է Հորմուզի նեղուցին: Թրամփը նախկինում պահանջում էր, որ նեղուցը մշտապես բաց եւ անվճար լինի միջազգային նավագնացության համար, մինչդեռ համաձայնագրում Իրանը պարտավորվում է ապահովել անվճար եւ անվտանգ անցումը միայն 60 օրվա ընթացքում: Իրանցի պաշտոնյաները միաժամանակ արդեն հայտարարել են, որ ապագայում կարող են վճարներ գանձել նեղուցից օգտվելու համար:

Փաստացի ստացվում է, որ Թրամփի եւ Իրանի միջեւ ձեռք բերված համաձայնագիրը զգալիորեն հեռու է այն առավելագույն նպատակներից, որոնք ԱՄՆ նախագահը հրապարակայնորեն ներկայացնում էր պատերազմի սկզբում: Այս հակամարտության արդյունքում հարց է առաջանում՝ ո՞վ հաղթեց այս դիմակայությունում: Ինչպե՞ս ստացվեց, որ ռազմական եւ տնտեսական հսկայական ճնշման տակ գտնվող Իրանը կարողացավ պահպանել իր հիմնական «կարմիր գծերը», հրաժարվել առանցքային զիջումներից եւ, ըստ էության, բանակցությունների սեղանին թելադրել իրեն ձեռնտու օրակարգը, մինչդեռ Դոնալդ Թրամփի կողմից հայտարարված բազմաթիվ նպատակներ այդպես էլ մնացին թղթի վրա:

*ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ*

## ԵՄ-ՈՒՄ ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ

**Եվրոպական խորհրդի նախագահ Անտոնիու Կոշտան պատշգամբել է Ռուսաստանի հետ դիվանագիտական կապուղի բացելու իր անսպասելի որոշումը, որը դարձել է այսուհետ կայացած ԵՄ առաջնորդների գագաթնաժողովի գլխավոր քննարկման թեման:**

Այս շաբաթ հայտնի էր դարձել, որ Կոշտայի աշխատակազմի ղեկավար Պեդրու Լուրտին մի քանի հեռախոսազրույց է ունեցել Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի օգնական Յուրի Ուշակովի հետ: Կոշտայի գրասենյակը պաշտոնապես չի հաստատել պաշտոնյայի ինքնությունը, սակայն եվրոպական աղբյուրների համաձայն՝ խոսքը հենց Ուշակովի մասին է:

ԵՄ պաշտոնյաների փոխանցմամբ՝ Կոշտան հանձնարարել էր իր թիմին կապ հաստատել Մոսկվայի հետ, որպեսզի անհրաժեշտության դեպքում Եվրամիությունը պատրաստ լինի պաշտպանելու իր շահերը խաղաղ բանակցությունների հնարավոր մեկնարկի դեպքում: Միեւնույն ժամանակ ընդգծվել է, որ շփումները եղել են կարճատեւ, առանց բովանդակային քննարկումների կամ բանակցությունների:

Սակայն Կոշտայի քայլը դժգոհություն է առաջացրել ԵՄ մի շարք անդամ պետությունների շրջանում: Լեհաստանը, Բալթյան երկրներն ու Սկանդինավյան պետությունները մտահոգություն են հայտնել, որ նման նախաձեռնությունից առաջ չեն խորհրդակցվել:

Մյուս կողմից, Բելգիան, Սլովենիան եւ Ավստրիան աջակցել են Կոշտայի նախաձեռնությանը: Սլովենիայի վարչապետ Յանեզ Յանշան հայտարարել է, որ ցանկացած քայլ, որը կարող է նպաստել ռազմական գործողությունների դադարեցմանն ու բանակցությունների մեկնարկին, պետք է ողջունվի:

Եվրամիության ներսում տարաձայնությունները պայմանավորված են նրանով, որ ոչ բոլոր երկրներն են կարծում, թե այժմ ճիշտ ժամանակն է Ռուսաստանի հետ որեւէ ձեւաչափով շփումներ սկսելու համար: Որոշ պետություններ էլ առաջարկում են, որ նման գործընթացը ղեկավարեն Գերմանիան, Ֆրանսիան եւ Մեծ Բրիտանիան՝այսպես կոչված E3 ձեւաչափով:

Կոշտայի շրջապատը պնդում է, որ նա նման քայլի է գնացել նաեւ Ուկրաինայի խրախուսմամբ: Ավելի վաղ Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկին հայտարարել էր, որ Եվրոպան պետք է ավելի ակտիվ դեր ստանձնի խաղաղ գործընթացում, այդ թվում՝ Ռուսաստանի հետ շփումների միջոցով:

Գագաթնաժողովի ավարտին ընդունված հայտարարության մեջ ԵՄ 27 անդամ երկրների ղեկավարները առաջին անգամ արձանագրել են, որ Եվրամիությունը պատրաստ է «ուժեղացնել իր ներգրավվածությունը» խաղաղ բանակցություններում: Սակայն այն փաստը, որ Մոսկվայի հետ կապը հաստատվել էր դեռեւս մինչեւ այդ հայտարարության ընդունումը, հարցեր է առաջացրել՝արդյոք Կոշտան ունեցել է ամբողջ ԵՄ-ի մանդատը, թե գործել է միայն որոշ անդամ երկրների աջակցությամբ:

Քննարկումների ֆոնին ակնհայտ է դարձել, որ Եվրամիությունում շարունակում են պահպանվել խոր տարաձայնություններ Ռուսաստանի նկատմամբ քաղաքականության հարցում: Միաժամանակ եվրոպացի առաջնորդների մի մասը շարունակում է պնդել, որ խաղաղության հասնելու համար ապագայում բանակցություններն անխուսափելի են, սակայն մինչ այդ անհրաժեշտ է շարունակել աջակցել Ուկրաինային՝ուժեղացնելու նրա դիրքերը ռազմաճակատում:

*Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ*

● *Անցած 1 օրում գրանցվել է 19 ավտովթար. 27 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԲՏԱ

## ԱՄՓՈՓԵԼ Է ԾՐԱԳԻՐԸ

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Ռուբեն Սիմոնյանը հունիսի 16-ին Ինժեներական քաղաքում հանդիպում է ունեցել պետական կառավարման համակարգի գերատեսչությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով նախարարությունում Microsoft 365 փաթեթի ներդրման փորձնական ծրագրի արդյունքները: Նախարարի տեղակալը հանդես է եկել բացման խոսքով՝ ներկայացնելով ծրագրի նպատակներն ու հիմնական ուղղությունները: Ռուբեն Սիմոնյանն ընդգծել է պետական կառավարման համակարգի թվայնացման ռազմավարական նշանակությունը եւ արդի տեխնոլոգիաների կիրառմամբ պրոֆեսիոնալ, արդյունավետ ու ճկուն աշխատանքային միջավայր ձեւավորելու անհրաժեշտությունը:

Նախաձեռնության հիմնական նպատակն է ապահովել ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության թվային վերափոխումը, բարձրացնել աշխատակիցների համագործակցության եւ հաղորդակցության արդյունավետությունը, ապահովել ծառայությունների հասանելիությունն ու անխափանությունը, ուժեղացնել տեղեկատվական անվտանգության մակարդակը, ինչպես նաեւ ստեղծել ժամանակակից, անվտանգ եւ ճկուն թվային աշխատանքային միջավայր:

Ծրագրի արդյունավետ եւ համակարգված գործարկումն ապահովելու նպատակով նախարարությունը նախապես բանակցություններ է վարել տեխնոլոգիական հսկա Microsoft ընկերության հետ, ինչի արդյունքում կնքվել է համագործակցության պայմանագիր: Իրականացվել են մի շարք կարեւոր աշխատանքներ, մասնավորապես՝ սերվերային ենթակառուցվածքի ամբողջական նախագծում՝ ամպային տեխնոլոգիաների ներդրմամբ, տեխնիկական վերազինում՝ օգտատերերի համակարգիչների փոխարինում եւ արդիականացում նոր համակարգերին համապատասխանեցնելու նպատակով, աշխատանքային գործիքակազմի ինտեգրում՝ Microsoft 365 փաթեթի, ինչպես նաեւ ներքին հաղորդակցության օպտիմալացման համար Microsoft Teams հարթակի ներդրում եւ լիարժեք շահագործում, էլեկտրոնային նամակագրություն՝ Microsoft Exchange սերվերի նախագծում եւ գործարկում, կիբեռանվտանգություն՝ տվյալների պաշտպանության բարձր չափանիշներով օժտված, առավել անվտանգ թվային միջավայրի ստեղծում:

ԲՏԱ նախարարության մասնագետները ներկայացրեցին ծրագրի իրականացման շրջանակներում առաջացած խոչընդոտները եւ դրանց հաղթահարմանն ուղղված լուծումները, ծրագրի առավելությունները եւ առաջիկա քայլերը:

Մասնակիցները հնարավորություն ունեցան քննարկելու ամպային ու թվային լուծումների տեղայնացման եւ ներդրման հեռանկարները: Հանդիպման ավարտին ԲՏԱ նախարարության մասնագետները պատասխանեցին գերատեսչությունների ներկայացուցիչներին հետաքրքրող մասնագիտական ու տեխնիկական հարցերին:

ԿԳՄՍ

# ԸՆԴՈՒՆԵԼ Է ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻՆ

**ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանն ընդունել է Բելգիայի Էլիզաբեթ թագուհու երաժշտական կապելլայի գլխավոր գործադիր տնօրեն Գրեգոր Շապելին:**

Հանդիպմանը ներկա են եղել նաեւ ՀՀում Բելգիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Էրիկ Դե Մույնքը եւ ՀԲԸՄ Հայաստանի մասնաճյուղի նախագահ եւ կենտրոնական վարչության անդամ Վազգեն Յակուբյանը: Էլիզաբեթ թագուհու երաժշտական կապելլայի ղեկավարը Հայաստանում է գտնվում՝ մշակութային կապերն ընդլայնելու եւ համագործակցությունն ամրապնդելու նպատակով: Նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը ողջունել է ներկաներին՝ ՀՀ մշակութային կյանքի զարգացմանն ուղղված պետական քաղաքականության համատեքստում կարեւորելով միջազգային հեղինակավոր կառույցների հետ համագործակցությունը:

«ՀՀ կառավարությունն այսօր արվեստի տարբեր բնագավառներում, այդ թվում՝ երաժշտության ոլորտում, տարաբնույթ ծրագրեր է իրականացնում զարգացման, հանրահռչակման, միջազգային համագործակցության ընդլայնման ուղղությամբ»,- ասել է Դանիել Դանիելյանը՝ ներկայացնելով պետական նվագախմբերի՝ Կառավարության աջակցությամբ իրականացվող գործունեության շրջանակը, մշակութային ապակենտրոնացմանն միջոցառումները, երիտասարդ տաղանդների բացահայտմանն ուղղված ծրագրերը: 1939 թվականին Էլիզաբեթ թագուհու հովանու ներքո հիմնադրված երաժշտական կապելլան միջազգային ճանաչում ունի դասական երաժշտության ասպարեզում: Այն լավ հնարավորություն է երիտասարդ արտիստների ինքնադրսեւորման համար: Գրեգոր Շապելի տեղեկացմամբ՝ երաժշտական կապելլան ամեն տարի տարբեր երկրներից հյուրընկալում է բազմաթիվ արտիստների, որոնց հետ աշխատում են միջազգային ճանաչում ունեցող մասնագետները: Կապելլայի առաքելության հիմքում ընկած է երաժշտական վարպետության փոխանցումը սերունդներին: Նախկինում Հայաստանից առանձին անհատներ դիմել եւ կրթություն են ստացել այս հեղինակավոր կրթօջախում: Էլիզաբեթ թագուհու երաժշտական կապելլայի գլխավոր գործադիր տնօրենը նշել է, որ այժմ փորձ է արվում գործընթացը ինստիտուցիոնալ հիմքի վրա դնել եւ պետական կառույցների ու գործընկերների համագործակցությամբ ավելի շատ երիտասարդների ուղղորդել դեպի այս հաստատություն:

«Սա ոչ թե նոր բարեկամության սկիզբ է, այլ շարունակություն, քանի որ Էլիզաբեթ թագուհու երաժշտական կապելլայի ու հայերի միջեւ համագործակցությունը ծագել է դեռեւս նախորդ դարի 40-ական թվականներից, երբ հիմնադրվել է հաստատությունը: Հայտնի է, որ դեռ այդ ժամանակից Էլիզաբեթ թագուհու ու կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի միջեւ բարեկամական հարաբերություններ էին ձեւավորվել, ուստի մենք այստեղ ենք ոչ թե նոր կապեր հաստատելու, այլ շարունակելու հարաբերությունները»,-ասել է Գրեգոր Շապելը՝ ընդգծելով, որ հայ արվեստագետների տաղանդը տեսանելի է ամբողջ աշխարհում:

Էլիզաբեթ թագուհու երաժշտական կապելլայում կրթություն ստանալու նպատակով Հայաստանի երաժիշտները կարող են դիմել «Դաշնամուր», «Թավջութակ», «Ջութակ», «Ալտ», «Կամերային երաժշտություն», «Վոկալ», «Երգեհոն» (հատուկ ծրագրերի եւ վարպետության դասերի շրջանակում) մասնագիտություններով: Դիմումներն ընդունվում են կապելայի կայքի միջոցով. դիմորդ արտիստները ներկայացնում են իրենց կատարողականի ձայնագրությունները, այնուհետեւ հրավիրվում են Բելգիա՝ լսումների: Ընդունվողները սովորում են 3 տարի:

Հայաստան-Բելգիա մշակութային կապերն ամրապնդելու, համագործակցությունն ընդլայնելու գործում կողմերը կարեւորել են Բելգիայում հայկական սփյուռքի դերը: Մասնավորապես՝ նոր համագործակցության կամուրջի ձեւավորման գործում ընդգծվել է ՀԲԸ միության ներդրումը:

## ՀՈՒԾԱԳԻՐ ՍՏՈՐԱԳՐԵՑԻՆ ԲԱՐՍԵԼՈՆԱՅՈՒՄ

Գ

**Իդրամը եւ Glovo-ն համագործակցության հուշագիր ստորագրեցին Բարսելոնայում:**

Glovo Retail Media Day 2026-ի շրջանակում Իդրամն ու Glovo-ն Բարսելոնա քաղաքում՝ Glovo ընկերության գլխամասային գրասենյակում, կնքել են համագործակցության հուշագիր, որի շրջանակում շուտով Glovo հավելվածում հնարավոր կլինի վճարումներ կատարել Idram&IDBank հավելվածի միջոցով՝ վճարման տարբերակ ընտրելով Իդրամը:Համագործակցությունը նպատակ ունի հայ օգտատերերի համար ստեղծել ավելի հարմար, արագ եւ անվտանգ թվային փորձառություն՝ համատեղելով երկու ընկերությունների կայուն էկոհամակարգերը:

Նոր համագործակցության շրջանակում Իդրամի օգտատերերի համար հասանելի կլինեն Glovo հարթակի հատուկ առաջարկներն ու բացառիկ առավելությունները, իսկ երկու ընկերությունները միասին պարբերաբար կիրականացնեն տարբեր նախաձեռնություններ եւ արշավներ օգտատերերի համար:Իդրամի կոմերցիոն տնօրեն Գրիգորի Յոլյանի խոսքով՝ այս համագործակցությունն արտացոլում է Հայաստանում նորարարական եւ հաճախորդակենտրոն թվային փորձառություններ ստեղծելու երկու ընկերությունների ընդհանուր տեսլականը. «Իդրամում մենք միշտ ձգտում ենք մեր օգտատերերին առաջարկել ոչ միայն վճարային ծառայություններ, այլեւ ամբողջական եւ արժեք ստեղծող փորձառություններ: Մեզ համար հատկապես կարեւոր է, որ Հայաստանից դուրս գործող եւ միլիոնավոր օգտատերերի վստահությունը վայելող նման մեծ գործընկերն ընտրել է համագործակցել հենց Իդրամի հետ, եւ շուտով մեր օգտատերերը Glovo-ի հավելվածում վճարելիս կարող են վճարման տարբերակ ընտրել Իդրամը: Սա եւս մեկ անգամ ցույց է տալիս, որ հայկական թվային էկոհամակարգը զարգանում է եւ կարող է հետաքրքիր ու արժեքավոր համագործակցություններ ստեղծել միջազգային խաղացողների հետ»,- նշեց Գրիգորի Յոլյանը:

Glovo-ում եւս կարեւորում են համագործակցության ռազմավարական նշանակությունը հայկական շուկայի համար: «Glovo-ում մենք մշտապես փնտրում ենք ուղիներ՝ մեր հարթակն ավելի հասանելի, հարմար եւ շահավետ դարձնելու օգտատերերի համար: Իդրամի հետ համագործակցությունը, որը Հայաստանում ամենավստահելի եւ լայնորեն օգտագործվող վճարային համակարգերից մեկն է, ռազմավարական քայլ է, որը թույլ կտա մեր հաճախորդներին առաջարկել ավելի մեծ արժեք: Ուրախ ենք՝ մեկնարկելու այս համագործակցությունը եւ ստեղծելու իրական առավելություններ, բացառիկ արշավներ եւ անվտանգ ծառայություններ Հայաստանի օգտատերերի համար»,-ասաց Glovo Armenia-ի գործող գլխավոր տնօրեն Թամար Գոճաոլանեանը:

Համագործակցության արդյունքում ընկերությունները նախատեսում են տարվա ընթացքում իրականացնել մի շարք համատեղ նախաձեռնություններ՝ ուղղված հաճախորդների փորձառության բարելավմանն ու թվային ծառայությունների զարգացմանը Հայաստանում:

*Իդրամ ընկերությունը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից (Գ)*

*●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ՀՖՖ

# ՀԱՅՏԱՐԱՐԵԼ Է ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի փոխնախագահ եւ գործկոմի անդամ Արմեն Նիկողոսյանը հանդես է եկել պաշտոնական հայտարարությամբ, որում նշված է.**

«Հարգելի՛ ֆուտբոլային հանրություն, Անցյալ տարեվերջին կայացած ՀՖՖ ժողովում հայտարարել էի, որ 2026 թվականի գործադիր կոմիտեի ընտրություններում չեմ առաջադրվելու եւ ավարտելու եմ գործունեությունս ՀՖՖ փոխնախագահի պաշտոնում: Այս ընթացքում, սակայն, տեղի ունեցան իրադարձություններ, որոնք որոշակի շտկումներ մտցրին որոշմանս մեջ: Նախ՝ Հայաստանի ֆուտզալի ազգային հավաքականը մասնակցեց Եվրոպայի առաջնության խմբային փուլին, ինչն աննախադեպ արդյունք էր հայկական սպորտի համար: Այն հպարտությունը, որ մեր երկիրը վերջապես եվրոպական առաջատարների հետ նույն շարքում է, ինչպես նաեւ այդ օրերին ապրածս հուզմունքն ու էմոցիաները, մաղթում եմ բոլոր մարզասերներին:

Ապա տեղի ունեցավ էլ ավելի կարեւոր ու շատերի համար անհավանական մի իրադարձություն. մեր երկիրը Վրաստանի հետ համատեղ իրավունք ստացավ կազմակերպելու Նշանակությամբ աշխարհի երկրորդ խոշորագույն մրցաշարը՝ 2029 թվականի Աշխարհի Մ-20 տարեկանների եզրափակիչ առաջնությունը: Մեծ հաշվով՝ չէի էլ երազում, որ պաշտոնավարմանս ընթացքում անմիջական մասնակցություն կունենամ ոչ վաղ անցյալում անհասանելի թվացող նման միջոցառումներին: Բայց հիմա սա իրողություն է, պետք է գնալ նոր նպատակների հետեւից, եւ ես մասնակցելու եմ հենց այս մրցաշարի կազմակերպման նախապատրաստական աշխատանքներին: Հետեւաբար հայտարարում եմ ՀՖՖ փոխնախագահի պաշտոնից եւ գործկոմի անդամությունից հրաժարական տալու մասին:

Շնորհակալություն եմ հայտնում գործընկերներիս համատեղ աշխատանքի համար: Արձանագրելով, որ եղել են թե՛ հաջողություններ եւ թե՛ ձախողումներ՝ հայցում եմ բոլորի ներողամտությունը: Շատ դեպքերում հաշտ չեմ եղել կայացված որոշումների հետ, բայց միշտ պես առաջնորդվել եմ հայկական ֆուտբոլի շահով՝ առաջնային համարելով հովանավորչության ու կոռուպցիայի բացառումը: Կարող եմ փաստել, որ ՀՖՖ ներկայիս ղեկավարությանը հաջողվել է ամբողջապես արմատախիլ անել այդ երեւույթները, եւ սա արդեն անշրջելի իրողություն է: Վստահ եմ՝ մոտ ապագայում կտեսնենք նաեւ ազգային հավաքականի վերելքը, ինչի համար ստեղծվել են բոլոր անհրաժեշտ պայմանները:

Մեր երկրին ցանկանում եմ ամուր ու անսասան խաղաղություն, իսկ հայկական սպորտին ու ֆուտբոլին՝ նորանոր հաղթանակներ:

Սիրով՝ Արմեն Նիկողոսյան»:

ՄԱՀԱՑԵԼ Է

Մտավորական Վրեժ Սարուխանյանը ֆեյսբուքյան իր էջում հայտնել է, որ մահացել է ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, «Մովսես Խորենացի» մեդալակիր Ռիտա Շառոյանը. «Երկրային կյանքին հրաժեշտ տվեց բացառիկ մի անհատականություն՝ նվիրյալ մշակութաբան, վաստակած ու սիրված ժուռնալիստ, հրապարակախոս, Աշնակի արժանապատիվ դուստր Ռիտա Շառոյանը: Նա աշխատել է Գառնիի դպրոցում, «Սովետական Հայաստան» թերթում, Ամերիկյան «Հորիզոն» հեռուստաընկերության հայաստանյան ներկայացուցիչ, Երեւանի քաղաքապետարանի «Հայարտ» մշակութային կենտրոնի տնօրեն... Ռիտայի իսկական կենսագրությունը միայն թվերն ու փաստերը չեն, այլ իր ժողովրդի ու սեփական տաղանդներով ապրած եւ դեռ 70-ը չբոլորած, բայց Հայրենիքին նվիրումի անսահման անանձնական կյանքն ու ամենագոր ժամանակը:

Մեր ժողովրդի հոգեւոր արժեքները ներկայացնելու ազգօգուտ գործունեություն ծավալեց: Այսօր եւ միշտ Հայոց մշակույթի ոսկե ֆոնդում են Ռիտա Շառոյանի հեղինակային «Հնագույն նվագարաններ» ֆիլմաշարի տասնյակ գանձերը: Իր խոստովանությամբ՝ «Նպատակ ունեմ այս ֆիլմերի միջոցով նոր ժամանակների մարդուն շարունակաբար ծանոթացնել մեր ազգային մշակույթի բյուրեղյա գանձերին»:

ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Մովսես Խորենացի մեդալակիր Ռիտա Շառոյանի բացառիկ հարցազրույցները տիեզերքի գաղտնիքների տիրակալ Գրիգոր Գուրզադյանի եւ տաղանդավոր արձակագիր Հրանտ Մաթեւոսյանի հետ բացառիկ հարցազրույցներն ու այլ հրապարակումները դասագրքային արժեք են ժուռնալիստների համար: Նա արժանացել է բազում պարգեւների, բայց ամենաարժեքավորը իրեն ճանաչողների սերն ու ապրեցնող ջերմ հուշերն են: Հոգեհանգիստը կլինի հունիսի 19-ին ժամը 17-20-ը Կոնդի Սուրբ Հովհաննես եկեղեցում, հուղարկավորությունը՝ հաջորդ օրը նույն տեղից ժամը 13:00-ին»:

ԼՈՒՐԵՐ

## ԻՆՉՈՒ ԷՆԴՐԻԿԸ ՉԻ ԽԱՂՈՒՄ

Բրազիլիայի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Կառլո Անչելոտին ԱԱ-2026-ի շրջանակում Հայիթիի դեմ կայանալիք խաղից առաջ հրավիրված մամուլի ասուլիսի ժամանակ անդրադարձել է երիտասարդ հարձակվող Էնդրիկի խաղաժամանակին՝ ընդգծելով, որ նա չափազանց կարեւոր ֆուտբոլիստ է թիմի համար, գրել է armsport-ը: «Ես տեսնում եմ բոլոր մեկնաբանությունները: Սա առաջին խաղն էր Աշխարհի առաջնությունում, մրցակցությունը մեծ է, եւ դա միանգամայն նորմալ է: Էնդրիկը չընդգրկվեց մեկնարկային կազմում... Բայց մենք ունենք եւս 15 ֆուտբոլիստ, որոնք նույնպես չխաղացին: Մենք պետք է համբերատար լինենք Էնդրիկի պարագայում: Նա հիանալի ֆուտբոլիստ է, եւ Բրազիլիան դեռ երկար կվայելի նրա վարպետությունը: Պետք է սպասել եւ նրան օգտագործել ճիշտ ժամանակին: Նա կարեւոր նշանակություն կունենա հավաքականի համար»,- խոսալացի մասնագետի խոսքերն է մեջբերում Globo Esporte-ն: Հիշեցնենք, որ ԱԱ-2026-ի խմբային փուլի երկրորդ տուրի Բրազիլիա - Հայիթի հանդիպումը կկայանա շաբաթ օրը՝ հունիսի 20-ին: Խաղի մեկնարկը նախատեսված է Երեւանի ժամանակով 04:30-ին:

## ՍՏԻՊՎԱԾ Է ԵՂԵԼ ԱՊԱՑՈՒՑԵԼ

Իսպանիայի ազգային հավաքականի հարձակվող Բորխա Իգլեսիասը հայտնվել է զավեշտալի իրավիճակում Աշխարհի 2026 թվականի առաջնության ընթացքում, գրում է armsport-ը: Ինչպես հայտնում է իսպանական El Chiringuito պարբերականը, 33-ամյա ֆուտբոլիստին թույլ չեն տվել մուտք գործել ԱՄՆ-ի Չաթանուգա քաղաքում տեղակայված թիմի մարզաբազա: Պատճառն այն է եղել, որ Իգլեսիասը զբոսանքի դուրս գալիս հավատարմագրման քարտը մոռացել է հյուրանոցի իր համարում: Երբ նա փորձել է վերադառնալ բազայի տարածք, անվտանգության աշխատակիցները նրան չեն ճանաչել եւ հրաժարվել են ներս թողնել: Թեեւ ֆուտբոլիստը փորձել է բացատրել, որ ինքն Իսպանիայի հավաքականի խաղացող է, պահակազորն անդրդվելի է մնացել: Արդյունքում, Իգլեսիասը ստիպված է եղել կապ հաստատել թիմի ադմինիստրատորի հետ եւ սպասել դրսում, մինչեւ նրա ինքնությունը պաշտոնապես կհաստատվի: Հիշեցնենք, որ Իգլեսիասը պահեստայինների նստարանին էր մնացել ԱԱ-2026-ի խմբային փուլի առաջին տուրում Կաբո-Վերդեի դեմ կայացած խաղում, որն ավարտվել էր գոլազուրկ ոչ-ոքիով: Հունիսի 21-ին իսպանացիներն իրենց հաջորդ հանդիպումը կանցկացնեն Սաուդյան Արաբիայի ազգային ընտրանու դեմ:

● *Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում հունիսի 21-ին՝ ժամը 12:00-ին, կկայանա «Պոչատ աղվեսը» ներկայացումը:*

# ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

## ԿԱՐԳ

**ՀԱՐՑ. Ո՞r իրավիճակը կարող է համարվել շահերի բախում, եւ ի՞նչ կարող է ներառել պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահը:**

*Լեւոն Գասպարյան, 54 տարեկան*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Լայն իմաստով՝ շահերի բախումը պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահերի եւ հանրային շահի միջեւ կոնֆլիկտն է: Ազգային օրենսդրությունն անդրադառնում է շահերի բախմանը հանրային հարաբերությունների ամենատարբեր ոլորտներում եւ նախատեսում կարգավորումներ հանրային ծառայության տեսակները կարգավորող ոլորտային օրենքների, այլ իրավական ակտերի շրջանակներում: Այդուհանդերձ, հանրային պաշտոն եւ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց բարեվարքությանն առնչվող հարցերը, նախ եւ առաջ, կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով, որը շահերի բախումը սահմանում է որպես իրավիճակ, երբ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահերն ազդում են կամ կարող են ազդել վերջինիս պաշտոնեական պարտականությունների անաչառ եւ օբյեկտիվ կատարման վրա: Իր հերթին՝ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահի ներքո հասկացվում է որեւէ արտոնություն իրեն կամ իր հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաեւ այն անձանց կամ կազմակերպություններին, որոնց հետ ինքը կամ իր հետ փոխկապակցված անձն ունի գործարար, քաղաքական կամ այլ գործնական կամ անձնական հարաբերություններ:

*Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով*

*Էջը՝ ՄԱՐԻԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ*

## ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՐՑ. Արդյո՞ք եկեղեցիներում պաշտամունքի առարկա են Հիսուսի պատանքը, փշե պսակը, Նրան խոցած գեղարդի մի մասը, սրբերի, առաքյալների մասունքները:**

*Գայանե Աթոյան, 57 տարեկան*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Քրիստոնեական եկեղեցիները, առավել եւս Հայ առաքելական եկեղեցին երբեք պաշտամունքի առարկա չեն դարձրել Քրիստոսի կամ առաքյալների, սրբերի իրերը, մասունքները: Մենք պաշտում եւ երկրպագում ենք կենդանի Աստծուն: Իսկ վերոնշյալները հավատը զորացնելու համար են: Հին Կտակարանում Աստված պատվիրեց, որպեսզի հրեաներն ուխտի տապանակ պատրաստեն, ուր զետեղվեցին կավե սալիկները՝ տասնաբանյա պատվիրաններով, Ահարոնի ծաղկած գավազանը եւ հրեաներին 40 տարի կերակրող մանանայով լի սափորը: Արեւմտյան եկեղեցիները փորձում են սրբերի մասունքների եւ հրաշագործ այլ իրերի միջոցով իրենց գերակայությունն ապացուցել: Հավատը կարող է լինել առանց ճանաչելու: Դա ոչ թե կույր հավատ է, այլ՝ անմնացորդ վստահություն առ Աստված: Այդ ճանաչողության հասնում են սեփական որոնումով կամ աստվածային հայտնությամբ: Ճանաչելու հիմքում հավատն է: Երբ փորձում են առանց հավատի շատ բաներ ճանաչել, թվում են անտրամաբանական:

*Հայ առաքելական սուրբ եկեղեցի*

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի*

Փամբակ գետի վրայից ապամոնտաժվում է «մահաբեր» անունը ստացած երկաթե խողովակե կամուրջը, որը 7 եւ 13-ամյա քույրերի ողբերգության պատճառ էր դարձել:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

| | | |
|---|---|---|
| | Շիրակ | + 9 + 14<br>+ 22 + 27 |
| | Կոտայքի լեռներ | + 10 + 13<br>+ 22 + 25 |
| | Կոտայքի նախալեռներ | + 17 + 20<br>+ 27 + 30 |
| | Գեղարքունիք | + 9 + 13<br>+ 22 + 25 |
| | Լոռի | + 11 + 15<br>+ 23 + 26 |
| | Տավուշ | + 13 + 16<br>+ 23 + 26 |
| | Արագածոտնի լեռներ | + 7 + 11<br>+ 20 + 24 |
| | Արագածոտնի նախալեռներ | + 15 + 20<br>+ 26 + 31 |

| | | |
|---|---|---|
| | Արարատ | + 17 + 20<br>+ 30 + 33 |
| | Արմավիր | + 18 + 21<br>+ 31 + 34 |
| | Վայոց ձորի լեռներ | + 9 + 13<br>+ 23 + 26 |
| | Վայոց ձորի նախալեռներ | + 17 + 21<br>+ 31 + 35 |
| | Սյունիքի լեռներ | + 8 + 12<br>+ 21 + 24 |
| | Սյունիքի նախալեռներ | + 11 + 15<br>+ 24 + 28 |
| | Սյունիքի հովիտներ | + 17 + 22<br>+ 31 + 34 |
| | Երեւան | + 20 + 22<br>+ 36 + 38 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **19.06.2026**
Տպաքանակ՝ 3968
*Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21*

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*